

ՌԱՇԻԴ-Է-Դ-ԴԻՆԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Դ. ՓԱՓԱՋՅԱՆ

Ավստրիայի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը, Կառլ Յանի աշխատասիրությամբ, լույս է ընծայել XIV դարի պարսկալեզու պատմագրության խոշորագույն ներկայացուցիչ Ռաշիդ-է-դ-դին Ֆազլ-Ալլահ Քարիր ալ-Համադանիի «Քարիխ-ալ-Աֆրանջ» («Ֆրանկների պատմություն») վերնագրով պատմաաշխարհագրական աշխատությունը¹:

Յարդ արևելագիտությանը հայտնի էին միայն Ռաշիդ-է-դ-դինի այս երկի երկրորդ մասի III և IV գլուխները, որոնց բնագրերը ֆրանսերեն թարգմանությամբ և ծանոթագրություններով Կ. Յանը հրատարակել էր դեռևս 1951 թ., հիմք ունենալով «Ինդիա օֆիս» հաստատության գրադարանի XVII դարի և Բավարական պետական գրադարանի XVIII դարի ձեռագրերը²:

Տարիներ շարունակ զբաղվելով անվանի պատմագրի մատենագրական ժառանգության, հատկապես գրչագրերի ուսումնասիրությամբ, Կ. Յանը Ստամբուլի Թուփկափու Սարայի գրապահոցներում հայտնաբերել է «Ֆրանկների պատմության» երեք ամբողջական ձեռագրեր: Այդ ձեռագրերից հնագույնը և ամենալիակատարը հեղինակի կենդանության օրոք և, հավանաբար, նրա իսկ պատվերով, պարզ նասխ գրությամբ կատարված ընդօրինակությունն է: 1416 թ. գրչություն հանդիսացող մյուս ձեռագիրը ընդօրինակված է թեմուրյան շրջանի ճանաչված պատմիչ, Լանկ Թեմուրի թոռ Բայսոնդուրի օրոք գրված ընդհանուր պատմության՝ «Զուբդաթ-ու-թավարիխի» հեղինակ, Հաֆեզ-ե Աբրու անունով հայտնի Նուր-է-դ-դին Լութֆուլահի ձեռքով: Երրորդ գրչագիրը նույնպես XV դարի ընդօրինակություն է, որ գրչի կողմից սխալմամբ վերնագրված է «Քարիխ-ե ալամ» («Աշխարհի պատմություն»), ըստ երևույթին, ինչպես այդ մասին նշում է հրատարակիչը, այն շփոթելով Ռաշիդ-է-դ-դինի «Զամե'-աթ-թավարիխի» («Ժամանակագրությունների ժողովածու») հետ:

Կ. Յանը նպատակահարմար չի գտել տալ հիշյալ բնագրերի վերծանությունը կամ կազմել համեմատական բնագիր: Հրապարակված են միայն առաջին երկու գրչագրերի լուսանկարային նմանահանությունները, իսկ երրորդից՝ միայն երկու էջ: Թեև, ինչպես ասվեց, հնագույն և հավաստի ձեռագիրը հեղինակի օրոք կատարված ընդօրինակությունն է, սակայն առանձին հատվածներում այն ունի տեղանունների և հատուկ անունների բացթողումներ, որոնք արված են հետագայում կարմիր թանաքով լրացնելու նպատակով: Ուստի գերմաներեն թարգմանության համար հիմք է ընդունված Հաֆեզ-ե

¹ Karl Jahn, Die Frankengeschichte des Rašid ad-Din, Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften, Wien, 1977.

² Karl Jahn, Histoire Universelle de Rašid al-Din Fadl Allāh, Abul-Khair, I, Histoire des Francs, Leiden, 1951.

³ Հաեդես, № 2

Աբրուի ընդօրինակությունը, որտեղ առկա ոչ մեծ թվով բացթողումները լրացված են երրորդ ձեռագրի օգնությամբ: Եղել են, սակայն, առանձին տեղանուններ, որոնք չեն պահպանվել ձեռագրերից ոչ մեկում: Այդ դեպքում թարգմանիչը դրանք լրացրել է օգտվելով Աբու-Սուլեյման Դավութ Բանա-քաթիի հիշրեթի 717 (1317) թ. գրված «Ռովզաթու ուլի»-լ-ալբաբ ֆի թավարիս ալ-աքաբիի վալ-անսաբ» («Իմաստունների պարտեզ, մեծամեծների և ցեղաբանության պատմության մասին») ընդհանուր պատմությունից³, որը շարադրելիս հեղինակը մեծապես ներշնչված է եղել Ռաշիդ-էդ-դինի «Ջամե'-աթ-թավարիսից»⁴:

Բնագրի վերծանության հետ կապված հարցերի, գրչական աղավաղումների և ձեռագրային տարբերացվածքների վերաբերյալ դիտողությունները տեղ են գտել գերմաներեն թարգմանության տողատակի ծանոթագրություններում:

1301 թ. Ղազան խանի հանձնարարությամբ ձեռնարկելով «Ջամե'-աթ-թավարիսի» շարադրմանը, Ռաշիդ-էդ-դինը իր առաջ նպատակ էր դրել ի մի բերել այն ժամանակվա քաղաքակիրթ աշխարհի բոլոր երկրների ժամանակագրորեն ճշգրտված պատմությունը: Ի տարբերություն մյուս մահմեդական պատմիչների, նա փորձել է այդ ստվար աշխատության մեջ ընդգրկել նաև քրիստոնյա աշխարհի, կամ, ավելի ճիշտ, քրիստոնյա տերությունների պատմությանը վերաբերող կարևոր տեղեկությունները, սկսած «աշխարհի արարչագործությունից» մինչև իր ժամանակները:

Այդ մեծ գործի ստեղծումը Ռաշիդ-էդ-դինից խել է շուրջ 10 տարի: Եվ սակայն, ինչպես նշված է «Թարիխ-ալ-Աֆրանջի» սկզբում, հիշրեթի 705 թ. (1305—1306 թթ.), նա որոշել է քրիստոնյա աշխարհի վերաբերյալ հավաքված աշխարհագրական ու ժամանակագրական նյութերի հիման վրա կատարված շարադրանքը ամփոփել առանձին գրքում, իսկ «Ջամե'-աթ-թավարիսի» վրա նա շարունակել է աշխատել ևս հինգ տարի և ավարտել՝ 1311 թ.:

Նման առանձին մի ուսումնասիրության ավելի շտապ գլուխ բերելու ձգտումն անշուշտ պետք է բացատրել օրվա քաղաքական հարաբերություններից թելադրված պահանջներով: Եվրոպական քրիստոնյա երկրների հետ իլխանների, և հատկապես Ղաղան-խանի հարաճում քաղաքական և տնտեսական կապերի շրջանում այդ երկրների ու ժողովուրդների վերաբերյալ աշխարհագրական, պատմական, տնտեսական և մշակութային ավելի ընդարձակ և հավաստի տեղեկությունների անհրաժեշտությունը շատ մեծ էր:

Ամբողջ աշխատությունը բաժանված է երկու մասի, որոնցից յուրաքանչյուրն ունի շորս գլուխ: Առաջին մասում, հետևելով պարսկալեզու պատմագրության ավանդույթներին, փորձ է արված խիստ համառոտ թվարկել մինչ այդ գոյություն ունեցող պետությունները: Խոսվում է հրեական, բաբելական, պարսկական, հունական, հռոմեական, բյուզանդական պետությունների, Արաբական խալիֆայության և ապա սելջուկների ու մոնղոլների պետության մասին: Հաջորդ երեք գլուխներում, կրոնական գրականության հիման վրա, տրված է Ադամի և նրա սերունդների, Նոյի, նրա որդիների և

³ Edward G. Browne, A literary history of Persia, vol. III, Cambridge, 1956, էջ 100,

⁴ تاریخ بناکتی، باهتمام جعفر شعار، تهران، ۱۳۵۸

նրանցից սերած ժողովուրդների պատմությունը, և ապա՝ Աբրահամի և հաջորդների սերնդաբանությունը մինչև Մարիամ:

Որոշակի աղբյուրագիտական արժեք է ներկայացնում աշխատության երկրորդ մասը, որի առաջին գլխում, որպես նախաբան, համառոտ բացատրված են քրիստոնեական հավատքի սկզբունքները: Սրան պետք է հաջորդեր եվրոպական երկրների մանրամասն աշխարհագրությունը և աշխարհիկ ու հոգևոր իշխանության ժամանակագրությունը: Սակայն նախքան այդ հիմնական նյութին անցնելը Ռաշիդ-էդ-դինը անհրաժեշտ է գտել երկրորդ «Հայոց երկրի սահմանների, նրա քաղաքների ու լեռների մասին» վերնագիրը կրող գլխում որոշ տեղեկություններ տալ Կիլիկյան հայկական պետության վերաբերյալ: Այնուհետև արդեն, վերջին 3-րդ և 4-րդ գլուխները, որոնք, ինչպես ասվեց, գիտական շրջանակներին հայտնի են 1951 թ. հրատարակությանմբ, հաջորդաբար նվիրված են եվրոպական երկրների աշխարհագրությանը և այնտեղ իշխած արքաների ու Հռոմի պապերի ժամանակագրությանը, սկսած Օգոստոս կայսրից (մ. թ. ա. I դար) մինչև Հաբսբուրգյան Ալբրեխտ I-ը (1298—1308) և Պետրոս Առաքյալից մինչև Բենեդիկտ XI պապը (1303—1305):

«Թարիխ-ալ-Աֆրանջի»՝ երեք արժեքավոր բնագրերի հիման վրա կատարված սույն ամբողջական գիտական հրատարակությունը գալիս է զգալիորեն հարստացնելու մեր գիտելիքները Ռաշիդ-էդ-դինի՝ և՛ որպես տաղանդավոր քաղաքական-պետական գործչի, և՛ որպես իր ժամանակի խոշորագույն գիտնականի ու մատենագրի մասին: Աշխատությունը գրելիս նա ձեռքի տակ ունեցել է քրիստոնեական կրոնադավանաբանական հարուստ գրականություն, օգտագործել է այդ ժամանակ գիտական շրջանառության մեջ գտնվող ոչ միայն արաբերեն ու պարսկերեն, այլ նաև լատիներեն ու եվրոպական այլ լեզուներով աշխարհագրական, պատմական ու ժամանակագրական երկեր: Անհավանական չէ, որ այդ գրականությունից օգտվելու ընթացքում նա դիմած լինի երկարատև այցելություններով իլխանների արքունիքում հյուրընկալվող հայ և եվրոպացի բանագնացների ու դեսպանների, իսկ առավել ևս իլխանական պետության հովանավորությունը վայելող պապական քարոզչական գործակալների՝ քալամաշիների օժանդակությանը:

Ռաշիդ-էդ-դինի սույն աշխատության ընդհանուր աղբյուրագիտական գնահատականը մասամբ տրված է ներկա հրատարակության առաջաբանում: Վստահաբար, այն ըստ արժանվույն կգնահատվի նաև սովետական արևելագետ-աղբյուրագետների կողմից:

Ներկա հոդվածի նպատակն է հայագետների ուշադրությանը ներկայացնել «Թարիխ-ալ-Աֆրանջի» երկրորդ մասի 2-րդ գլուխը, որտեղ, ինչպես ասվեց, Ռաշիդ-էդ-դինը, թեև բավականին համառոտ, սակայն չափազանց ուշագրավ աշխարհագրական, քաղաքական և պատմական տեղեկություններ է հաղորդում Կիլիկյան Հայաստանի մասին:

Պետք է ասել, որ Ռաշիդ-էդ-դինի բոլոր աշխատությունները, ինչպես «Ջամե'-աթ-թավարիխը»⁵, այնպես էլ «Մուքաթթեթ-ե ոաշիդի» («Ռաշիդ-

⁵ Рашид-ад-дин Фазлаллах, Джами ат-таварих, т. I, крит. текст А. А. Ромаскевич, А. А. Хетакуров, А. А. Али-Заде, М., 1968; т. III, крит. текст А. А. Али-

յան գրադրություններ») խորագրով հայտնի նամակների և այլ գրությունների ժողովածուն⁶, նույնիսկ վերջերս միայն հայտնաբերված և հեղինակի ինքնագրով մեզ հասած ընդարձակ «Վակֆնամեն»⁷, Հայաստանի XIII—XIV դդ. սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության կարևոր սկզբնաղբյուրներ են հանդիսանում:

Իր այս աշխատության պատմաաշխարհագրական մասը սկսելով Հայաստանին նվիրված առանձին գլխով, Ռաշիդ-էդ-դինը ելնում էր այն յուրահատուկ իրավիճակից, որը պայմանավորված էր, մի կողմից, եվրոպական երկրների և, մյուս կողմից՝ իլխանական պետության հետ Կիլիկյան հայկական պետության քաղաքական և տնտեսական հարաբերություններով: Խոշոր պետական գործչի և քաղաքագետի սահմանումները քաղաքական հարուստ կենսափորձից և իրատես դատողություններից բխող ընդհանրացումների արդյունք են:

Այսպես, հենց առաջին նախադասությամբ Կիլիկյան Հայաստանը բնորոշված է որպես եվրոպական երկրների ֆորպոստ. «Հայոց երկիրը գտնվում է Ֆրանկների երկրի առջևում և փաստորեն նրա նախասրահի դերն է կատարում»: Այս բնորոշման մեջ հստակորեն արտահայտված է ոչ միայն այն ժամանակ արդեն իսկամ ընդունած Ղազան-խանի իլխանական պետության, այլ ամբողջ առաջավոր Ասիայի իսլամական տերությունների վերաբերմունքը Կիլիկիայի հայկական պետության նկատմամբ: Եվ որպեսզի պարզ լինի, որ խոսքը Կիլիկիային է վերաբերում, անմիջապես բացատրված է, որ «կա երկու Հայաստան, Մեծ և Փոքր: Մեծ Հայաստանի երկայնքը ձգվում է Երզնկայի սահմաններից մինչև Սալմաստի սահմանները, իսկ լայնքը՝ Վրաց երկրի սկզբից մինչև Վանի և Ոստանի ծայրը: Փոքր Հայաստանի երկայնքը Ասորիքից մինչև Ռոմի երկրի վերջն է, որը կոչվում է Ուջ, իսկ լայնքը Մալաթիայից մինչև Ռոմի Անթաքիայի սահմանը»:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, հստակորեն ուրվագծված է Մեծ Հայքի XIV դարի սկզբի վաղաքաղաքական իրավիճակը, որը հիմնականում համընկնում է Ռաշիդ-էդ-դինի մյուս գործերում և Համդ-Ալլահ Ղազվինիի «Նուզ-հաթ-ալ-կուլուբում»⁸ հանդիպող նկարագրություններին:

Անհրաժեշտ է նշել, որ Մեծ և Փոքր Հայաստանների (Արմինիաթ-ալ-քուբրա, Արմինիաթ-ալ-սուլրա) աշխարհագրական հասկացությունները արաբ մատենագիրների մոտ, ինչպես նաև հետագայի որոշ պարսկալեզու աղբյուրներում, տարբեր ժամանակներում տարբեր իմաստ են ունեցել և երբեք չեն համապատասխանել վաղ ժամանակների «Մեծ Հայք» և «Փոքր Հայք» հասկացություններին:

Заде, Баку, 1957, նույն հատորում տե՛ս նաև բնագրի Ա. Կ. Արենդսի սուս. թարգմանությունը: Ա. Կ. Արենդսի և Յու. Պ. Վերխովսկու թարգմանությամբ 1946 և 1960 թթ. լույս են տեսել «Ջամե-աթ-թավարիխ» երեք հատորները:

رشيد الدين فضل الله، مكاتبات رشيدى، بسعی و اهتمام و تصحيح رشيد الدين محمد شنيعة، ۱۹۴۷. Rashid-ad-din, Perepiska, perevod, vvedeniye i kommentariy A. I. Faliной, M., 1971.

رشيد الدين فضل الله، تَقْدِيمَةُ ربيع رشيدى، تهران، ۱۳۸۰.

حمد الله مستوفى، نزهة القلوب، بکوشش محمدتبير سياقى، تهران ۱۳۳۶ (այսուհետև՝ «Նուզհաթ-ալ-կուլուբ»):

IX—XIII դդ. արաբական աղբյուրներում Մեծ Հայաստանի սահմանները մերթ համապատասխանում են Արշակունյաց շրջանի սահմաններին, մերթ ընդգրկում են նաև Աղվանքն ու Արևելյան Վրաստանը, մերթ՝ միայն Արևմտյան Հայաստանը: Իսկ Փոքր Հայաստան է կոչվում Թբիլիսիից արևելք ընկած շրջանը, կամ հին Կամբեջանը⁹:

Իլխանական շրջանում Արևելյան Հայաստանը, Զաքարյանների տիրապետության ժամանակաշրջանի ավանդույթով, ընդգրկված էր «Երուրջիստանի վիլայեթի» մեջ: «Արմինիաթ-ալ-քուբրա» (Մեծ Հայաստան) կամ «Բիլադ-ալ-Արման» (Հայոց երկիր) էր կոչվում ամբողջ Արևմտյան Հայաստանը, իսկ սելջուկյան էմիրության կամ Շահ-Արմենների պետության սահմաններով, երբեմն նաև Երզնկայի, Տարոնի և Մոկաց աշխարհի էմիրությունները ներառյալ¹⁰: Դա այն տարածքն է, որ «Թարիխ-ալ-Աֆրանջում» սահմանագծված է «Երզնկայից մինչև Սալմաստ», այսինքն մինչև Ուրմիո լիճը, և «Վրաց երկրի (Երուրջիստանի վիլայեթ) սկզբից մինչև Վանի ու Ոստանի վերջը», այսինքն Բագրևանդի ու Գոգովիտի շրջակայքից մինչև Մոկաց աշխարհ:

Ինչպես «Նուզհաթ-ալ կուլուբում», այնպես նաև «Թարիխ-ալ-Աֆրանջում», Փոքր Հայաստանը (Արմինիաթ-ալ-սուղրա կամ Արմինիաթ-ալ-աս-ղար) Կիլիկյան հայկական թագավորությանը ենթակա երկիրն է: Համդ-Ալլահ Ղազվինին հատկապես շեշտում է, որ «Փոքր Հայաստանը Իրանի (իմա՝ իլխանական պետության—Հ. Փ.) սահմանների մեջ չի մտնում, նրանից արեւելք Մեծ Հայաստանն է, հյուսիսում Ռումի երկիրն է, հարավում՝ Ասորիքը, իսկ արևմուտքում՝ Միջերկրական ծովը»¹¹: Ռաշիդ-էդ-դինը, սակայն, ինչպես վերը տեսանք, չորս սահմանները նկարագրելու փոխարեն տալիս է երկրի լայնքն ու երկայնքը, որը լիովին համապատասխանում է Ղազվինիի նկարագրությանը: Պետք է եզրակացնել, ուրեմն, որ անկախ արաբապարսկական, ինչպես նաև բյուզանդական աշխարհագրության ավանդույթներից, իլխանական պետական շրջանակներում և մատենագրության մեջ, հետևելով արևմտաեվրոպական պետությունների օրինակին, Կիլիկյան հայկական պետությունը անվանում էին նաև Փոքր Հայաստան—Petite Arménie (Armenai minor)¹²:

Երկրի լեռներով շրջապատված լինելը նշելուց հետո ասված է, որ «այնտեղ կան հինգ խոշոր, շեն քաղաքներ» և ապա, երեք բնագրերի մեջ էլ, քաղաքների թվարկման համար տեղ է թողնված, որը հավանաբար պետք է լրացվեր կարմիր թանաքով¹³: Կ. Յանը գերմաներեն թարգմանության մեջ

⁹ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 16: հմմտ. Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 49—56: XVII դարի պարսկալեզու պատմիչ Իսբանդար Մունշին Փոքր Հայաստան է համարում Վանանդի, Բասենի և նրանց մերձակա շրջանները (տե՛ս Իսբանդար-բեկ Թուրքեման-Մունշի, Թարիխ-ե ալամարայե աբրասի, պարսկ. բնագիր, Թեհրան, 1957, հատ. II, էջ 742): Սխալմունքն առաջացել է այն բանից, որ նա Համդ-Ալլահ Ղազվինին վկայակոչելիս Արմինիաթ-ալ-քուբրայի մասին տրված տեղեկությունները վերադրել է Արմինիաթ-ալ սուղրային:

¹⁰ «Նուզհաթ-ալ կուլուբ», էջ 117:

¹¹ Նույն տեղում:

¹² Z. Khanzadian, Rapport sur l'unité géographique de l'Arménie, Paris, 1920, carte № 14, հմմտ. Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 59:

¹³ Հաֆնդ Աբրուի ընդօրինակության մեջ կարմիր թանաքով դրված է «Ախլաթ և...» ու չի

լրացրել է պակասող անունները, օգտվելով «Թարիխ-ե բանաքաթիից»։ Դրանք Այաս, Սիս, Տարսոն, Ադանա և Մսիս քաղաքներն են։ Այս լրացումը պետք է հավաստի համարել, քանի որ Բանաքաթին, ժամանակակից հեղինակ լինելուց բացի, ծառայության մեջ է եղել Ղազան-խանի և Ուլջաթուլի դիվանում և իր գիրքը գրելիս մեծ շափով գտնվել է Ռաշիդ-էդ-դինի աշխատությունների ազդեցության ներքո։ Ուշագրավ է, հատկապես, շուրջ 20.000 գյուղերի ու այլ բնակավայրերի մասին տրված տեղեկությունը, մանավանդ, երբ հաշվի առնենք, որ խոսքը վերաբերում է «հայտնի և անվանի վայրերին»։ պետք է եզրակացնել, որեմն, որ փոքր և աննշան բնակավայրերը հաշվի չեն առնված։

Ռաշիդ-էդ-դինը հետաքրքիր մանրամասներ է հաղորդում նաև դեպի Կիլիկիա ձգվող ճանապարհների մասին։ Նկարագրված են հատկապես և միայն Ռումի սուլթանությունից դեպի Կիլիկիա դնացող չորս գլխավոր ճանապարհները։ Դրանք հավանաբար ցամաքային ամենաբանուկ ուղիներն էին, որոնցով Կիլիկյան Հայաստանը կապվում էր բուն Հայաստանի, ինչպես նաև իլ-խանական պետությանը ենթակա մյուս երկրների հետ։

Չափազանց հետաքրքրական են Ռաշիդ-էդ-դինի դատողությունները «Եգիպտոսից և Ասորիքից մուսուլման զորքերի դեպի Հայոց երկիրը կատարած ասպատակությունների» վերաբերյալ, ինչպես նաև այն տեղեկությունները, որ նա հաղորդում է հայոց «Թաքֆուրի» (Թազավոր) այդ հարձակումներին դիմագրավելու, անառիկ բերդերի ու ամրությունների պաշտպանական սիստեմի վրա մշակված ուրույն ռազմավարության մասին։ Ուշագրավ է, որ տեղեկությունները տրված են Հայոց արքայի (Թաքֆուր) և Ֆրանսիայի թագավորի (ռեյ դը-Ֆրանս) միջև տեղի ունեցած երկխոսության ձևով։ Դա թույլ է տալիս ենթադրելու, որ հեղինակը այդ մասին տեղեկացել է հայկական արքունիքին շատ մոտ կանգնած անձնավորությունից, որ միանգամայն հնարավոր էր կիլիկյան արքաների, հատկապես Հեթում II-ի և իլխանական պետության ռազմական և քաղաքական համագործակցության շրջանում։ Երկխոսության սեղմ տողերում արտահայտված են մամուլների օրըստօրե սաստկացող գիշատիչ արշավանքներին ենթակա Կիլիկյան հայկական պետության ծանր վիճակն ու հայ թագավորների (այս դեպքում առավելապես Հեթում II-ի, ինչպես նաև նրա եղբայրներ Թորոսի, Սմբատի ու Կոստանդին I-ի և եղբորորդու՝ Լևոն III-ի) համառ և դժվարին պայքարն ու դաշնակիցներ որոնելու անհեռանկար ձգտումները։ Այդ հարց ու պատասխանների մեջ ուշագրավ տվյալներ կան նաև ամրացված բերդաքաղաքների պաշտպանական բացառիկ նշանակության և եգիպտական զորքերի ասպատակություններից երկրի կրած նյութական վնասների մասին, նաև այն մասին, որ յուրաքանչյուր գյուղից 3 հեծյալ զորակոչելու դեպքում կարելի էր ստեղծել 100.000-անոց հեծելազոր, որի պահպանության ծախսերը, սակայն, վեր էին պետության հնարավորություններից։ Այս դատողությունները թույլ են տալիս եզրակացնելու նաև, որ իրոք, վերևում նշված 20.000 բնակավայրերի մեջ մտնում են միայն խոշոր գյուղերն ու ավանները, իսկ երկրի մեծ ու փոքր բոլոր բնակավայրերի թիվը 30.000-ից ավելի պետք է եղած լինի։

շարունակած։ Հավանաբար գրիչը փորձել է լրացնել մի այլ աղբյուրից և սխալմամբ գրել միայն «Մեծ Հայաստանի» գլխավոր քաղաքի անունը։

Ի վերջո, կարևոր է նաև այն փաստը, որ «Հայոց երկրին» նվիրված գլխի վերջում տրված է Կիսրոս կղզու համառոտ նկարագրությունը, նշելով, որ «Սսից մինչև այնտեղ մեկ օրվա ծովային ճանապարհ է»։ Մեծ է եղել Կիլիկյան հայկական պետության ազդեցությունը կղզու տնտեսական և քաղաքական կյանքում։ Կապը մայր ցամաքի հետ իրագործվում էր հայկական նավահանգիստներ Այասի, Ալեքսանդրետի, Կոռիկոսի, Լամասի և մյուս առափնյա քաղաքների միջոցով, որը կենսական նշանակություն ուներ կղզու մատակարարման, ինչպես նաև ներքին և արտաքին առևտրի համար։

Հայագիտական ավելի լայն շրջանակներին մատչելի դարձնելու նպատակով ստորև հրապարակում ենք «Թարիխ-ալ-Աֆրանջի» այդ հետաքրքիր հատվածի՝ Կ. Յանի հրատարակած XIV—XV դդ. երկու ձեռագրերի հիման վրա կազմած պարսկերեն համեմատական բնագիրն ու հայերեն թարգմանությունը։ Բնագիրը կազմելիս հիմք է ընդունված հեղինակի կենդանության օրոք կատարված ընդօրինակությունը. բացթողումները լրացված են Հաֆեզ-ե Աբրուի ձեռագրից, տողատակում «Հ. Ա.» սկզբնատառերով նշելով նաև կարևոր տարբերությունները։

Թարգմանությանը առնթելի տրված են բնագրագիտական-աղբյուրագիտական, բանասիրական սկզբնական ծանոթագրություններ, նյութի առավել հանգամանալից ուսումնասիրությունը թողնելով անմիջապես Կիլիկիայի հայկական պետության սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության հետազոտությանը զբաղվող մասնագետներին։

در بیان حدود ولایت ارمن از مداین : ضیاع

ولایت ارمن در پیش مملکت فرنگستانست¹ و بمنزلت دهلیز آنجا. و
ارمینیه را. در دو موضع اطلاق کنند کبری و صغری. ارمینیه کبری
طول آن ممتد است از تخوم ارزجان تا حدود سلماس و عرض آن از ابند²
ولایت گرجستان تا اقصاء وان و وسطا. و ارمینیه صغری طول آن
از طرف شام است تا منتهی ولایت روم که آنرا اوج می خوانند و عرض
آن از تخوم ملاطیه تا مرز رونوه انطاکیه³. و از جمله جهات و جوانب کوه
بان ولایت محیط است. و در و پنج پاره شور معظم معمور است⁴ [ایاس،
سیس، تارسون، اذنه و مسیس] و از ضیاع و فری معتبر و مشهور قریب
بیست هزار پاره دیه معمور. و از ولایت روم بانجا چهار راه است، اول از

1 2. Ա. ֆրնգստանստ

2 2. Ա. մեծ

3 2. Ա. րօմ և անտաքիե

4 2. Ա. և Զ. Սխալմամբ տրված է «Մեծ Հայաստանի» կենտրոնական քաղաքի անունը։

5 Քաղաքների անունները՝ ըստ Կ. Յանի «Թարիխ-ե բանաքաթիից» կատարված լրացման։

جانب قيصريه که آنرا راه خوشجور و راه دولوگویند، دوم راه لولوه که معدن نقره است بالا قلعه تلوخ و آن راه کاروان شتر است، سیم راه قرامان که محاذی ساحل دریاء روم می رود تا بشهر ایلس، چهارم راهی که از شهر ملاطیه از جانب حذب ردیار شام بیرون می رود. و بسبب آنکه اصل آن ولایت نرساوند لشگرهای مسلمانان⁶ از ولایت مصر و شام بولایت ارمن تاختن می آورند. تکفور که پادشاه ارمینیة صغری است ولایت را باز میگذارد و بقدر قه بدریا می رود. ریدافرنس که پادشاه معظم دبار فرنک است پیش تکفور پیغام فرستاد که برا چندین ولایت است از هر دیهی سه سوار بیرون کن و با مسلمانان مصاف ده تابگریزند. تکفور جواب داد که مالی دافری می باید تا استعداد صد هزار سوار کرده شود و مصریان چون تاختن می آورند قریب ده هزار دینار خسارت بر ولایت زیادت نمی افتد و با این قلاع حصین چیزی بدست نمی دارند.⁷ و از سیس تا جزیره قبروس يك روزه راه دریا است و در آن جزیره چند باره شهر معمور است و صوف نیکو که بقبرسی⁸ مشهور است از آنجا می آرند و دادن نیز هم از اینجا می خیزد.

ՀԱՅՈՑ ԵՐԿԻՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ, ՆՐԱ ՔԱՂԱՔՆԵՐԻ
ԵՎ ՇԵՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայոց երկիրը գտնվում է ֆրանկների երկրի սուղևում և նրա նախասահ-
նի դերն է կատարում:

Կա երկու Հայաստան (Արմինիա)՝ Մեծ և Փոքր: Մեծ Հայաստանի եր-
կայնքը ձգվում է Երզնկայի¹ սահմաններից մինչև Սալմաստի սահմանները,
իսկ լայնքը՝ Վրաց երկրի սկզբից մինչև Վանի ու Ոստանի վերջը: Փոքր Հա-
յաստանի երկայնքը Ասորիից (Շամ) մինչև Ռումի երկրի վերջն է, որը կոչ-
վում է Ուշ², իսկ լայնքը Մալաթիայից է մինչև Ռումի Անթափայի³ սահմանը:

Այս երկիրը բոլոր կողմերից շրջապատված է լեռներով: Այնտեղ կան
հինգ խոշոր, շեն ֆաղաֆներ՝ [Այաս, Սիս, Տարսուն, Ադանա և Մսիս]⁴ և հայտ-
նի ու անվանի վայրերից ու գյուղերից՝ մոտ 20.000 շեն գյուղեր:

Ռումի երկրից դեպի այստեղ չորս նանապարհ կա: Առաջինը Կեսարիայի
կողմից է, որը կոչվում է Խոսձորի⁵ կամ Դավալուի⁶ նանապարհ: Երկրորդը
Լուլուվայի⁷ նանապարհն է, որ արծաթի հանքն է⁸, Թելուիս⁹ բերդի վերևում:
Այս նանապարհը ուղտերի կարավանի համար է: Երրորդը Կարամանի նա-
նապարհն է, որը Միջերկրական ծովի ավիով գնում է մինչև Այաս ֆաղաֆը¹⁰:

⁶ Հ. Ա., լեռնային լեռնաշղթան

⁷ Հ. Ա., լեռնային

⁸ Հայտ Հ. Ա.-ի, բնագրում սխալմամբ՝ Բեդլի

Չորրորդը այն նանապարհն է, որ Մալաթիայից, Հալեպի կողմից և Ասորի-
փից է դուրս գալիս¹¹:

Այս երկրի բնակիչները փրստոնյա են: Դրա համար էլ Ասորիփի և Եգիպ-
տոսի մանմեղական զորքերը ասպատակում են Հայոց երկիրը: Թաֆֆուրը (քա-
գավոր), որ Փոֆր Հայաստանի արևան է¹², թողնում է երկիրը և նավով գնում
և ծովը: Ռեյ դը-Ֆրանսը¹³, որ ֆրանկների երկրի ամենամեծ թագավորն է,
պատգամավոր ուղարկեց Թաֆֆուրի մոտ, ասելով. «Դու մեծ երկիր ունես,
յուրաքանչյուր գյուղից երեք հեծյալ հանիր, մանմեղականների դեմ պատե-
րազմիր, որպեսզի նրանք փախչեն»: Թաֆֆուրը պատասխանեց, թե «շատ
մեծ հարստություն է պետք, որ բավարարի 100.000 հեծյալ պահելու: Երբ
Եգիպտացիք ասպատակում են մեր երկիրը. շուրջ 10.000 դինարից ավելի
վնաս չեն պատճառում, և շնորհիվ մեր ամուր բերդերի, նրանց ձեռքը որևէ
բան չի ընկնում»:

Սսից¹⁴ մինչև Կիպրոս կղզին ծովով մեկ օրվա ճանապարհ է: Այդ կղզում
մի ֆանի շեն ֆաղաֆներ կան: Հոչակավոր «կիպրոսյան»¹⁵ ընտիր բուրդը
այստեղից են բերում, կնդրուկը¹⁶ նույնպես այստեղից է ստացվում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գերմաներեն թարգմանության մեջ «Երզնկան» (Արզինջան) շփոթված է «Ազերբայջանի»
հետ: Երկու ձեռագրերում էլ այդ հատվածը բավական պարզ կարդացվում է **ارزنجان**: Սխալը
ակնհայտ է նաև ըստ բովանդակության: Հայաստանը հարևան էր Ազերբայջանին (Ատրպա-
տական) հարավ-արևելքից, իսկ Սալմաստը դառնում էր երկու երկրների սահմանագիծը:
Ռաշիդ-էդ-դինը Մեծ Հայաստանի (Արմինիաթ-ալ-քուբրա) երկայնքը նկարագրելիս այն տե-
ղադրում է արևմտյան և արևելյան սահմանների վրա գտնվող երկու քաղաքների՝ Երզնկայի
և Սալմաստի միջև:

2. «Ուջ» թուրքերեն նշանակում է «ծայր»: Սելջուկյան տերություններում այսպես էին
կոչվում ֆեոդալական այն տիրույթները, որոնք տրվում էին երկրի ժայռամասերում հաստատ-
ված սահմանապահ զորքերի հրամանատարներին՝ ուջ-բեյերին: Այդպիսի տիրույթ է եղել նաև
Ռումի սուլթանության՝ Կիլիկյան Հայաստանի սահմանի վրա գտնվող Ուջը, որը հետագայում,
ինչպես սելջուկյան այլ էմիրություններում, կորցնելով իր վարչական իմաստը, առ այսօր
պահպանվել է որպես տեղանուն (տե՛ս Р. А. Гусейнов, Земли уджей, «Бартольдовские чте-
ния 1975», тезисы докладов и сообщений, М., 1975, էջ 15—16):

3. Առաջին ձեռագրում պարզ գրված է «Ռունվա Անթաքիա» (**روانوه انطاكية**),
իսկ Հաֆեզ-ե Աբրուի մոտ դարձել է «Ռում և Անթաքիա» (**روم و انطاكية**), որը բավա-
կան անորոշ է: Խոսքն այստեղ Պիսիդյան Անտիոքի մասին է, որն այն ժամանակ, գտնվելով
Ռումի սուլթանության սահմանում, ի տարբերություն Ասորիփի Անտիոքի, կոչվում էր «Ռու-
մի Անտիոք»: Թվում է թե Ռաշիդ-էդ-դինի մոտ պահպանվել է ժամանակի հայկական ժո-
ղովրդական կամ բարբառային ձևը: Հավանաբար հայերն ասել են «Ռումվա Անթաքիա», որը
բանավոր խոսքում կարող էր հնչել նաև «Ռունվա»: Սակայն գրավոր խոսքում քաղաքը կոչ-
վել է «Պիսիդյան Անտիոք»: Գրիգոր Ապիրատ իշխանը 1189 թ. մի չափածո հիշատակարանում,
նկարագրելով Լևոն I-ի տիրապետության սահմանները, գրում է.

Եւ աշխարհին Կիլիկեան,
Նոյն և բոլորս, որ այս սահման՝
Պատեալ լերամբս Տորոսեան,
ՅԱնտիոքէն Ասիւռական
Մինչ յԱնտիոքն Պիսիդեան:

(Տե՛ս Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, աշխ. Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1972, էջ 433)։ Քաղաքն այժմ թուրքերը վերանվանել են Յալվաշ։

4. Ինչպես վերը առիթ ունեցանք նշելու, բնագրում բաց թողնված քաղաքների անունները Կ. Յանը գերմաներեն թարգմանության մեջ վերականգնել է, վերցնելով Ջաֆար Շեարիի աշխատասիրության 1970 թ. Թեհրանում լույս տեսած Արու-Սուլեյման Դավութ Բանաքաթիի ժամանակագրությունից։

5. Առաջին բնագրում կետերի բացակայությունը պատճառ է հանդիսացել սխալ վերծանությունների։ Բնագրի ١٩٥٥-ը Կ. Յանը կարդացել է «Խուսջուր»։ Ըստ երևույթին թյուրիմացությանը նպաստել է Բանաքաթիի «խուշվար» ձևը։ Սակայն դա հայտնի խոզձորի ճանապարհն է։ Արաբական այբուբենը չունի «ձ» հնչյունը, ուստի այն փոխարինված է ջ-ով, իսկ ջ-երը դամմայով կարդալու դեպքում ստացվում է «խոսջուր»։ Այս ճանապարհի մասին հիշատակում է Սմբատ Գունդստարը, Լևոն II-ի կառուցած ամրացի կապակցությամբ. «Ի սոյն ամի (1272) թագաւորն Լևոն հրամայեաց շինել ամրոց առ լերամբն Տաւրոսի, հանդէպ քաջայաղթ զօրավարին Անդրէի պահարանիցն, կիսօրեայ ճանապարհաւ հեռի, ի պահպանութիւն այնմ գաւառին և հռչակաւոր ճանապարհին խոզձորոյ» (տե՛ս «Սմբատայ Սպարապետի Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 254)։

6. Այստեղ ևս ձայնանիշերի բացակայության և 9-ի սխալ ընթերցման հետևանքով գերմաներեն թարգմանության մեջ ٩٥٥-ն վերծանված է «Դուլու», թեև տողատակում կարծիք է հայտնված, որ դա հավանաբար Դեկին է։ Ձայնանիշերը (հարաբա) դրվելուց հետո այն ընթերցվում է Դավալու, և պարզ է դառնում, որ խոսքը հայտնի Կեսարիա—Դեկելի—Ֆեբե—խոզձոր—Սիս ճանապարհի մասին է։

7. Գերմաներեն թարգմանության Լալմի ընթերցումը համոզիչ չէ։ Մանավանդ որ թարգմանիչը, Հիլդի վկայակոչմամբ, դա նույնացնում է բյուզանդական Λαίον-ի և արաբական աղբյուրների Լուվուայի հետ։ Կարծում ենք, որ բնագրի ٩٥٥-ն հենց այդպես էլ կարելի է կարդալ։ Երբ ٩-ն հաջորդում է 9-ին, իրենից առաջ պահանջում է «վ» հնչյունը։ Ուստի երկրորդ 9-ն այդպես էլ հնչում է։ Իսկ բառավերջի ٩-ն պարսկերենում «է» և թուրքերենում «ա» է հնչում, ոչ թե «հ» (٩٥٥—բանդե-բանդա, ٩٥٥—դանե-դանա, ٩٥٥—դասթե-դաստա և այլն)։ Այդ բնականվայրը մինչև վերջերս էլ կոչվում էր Լուվա։

8. Այժմ՝ «Բուլգար մադեն» (բուլղարների հանք) կամ «Մադենքոյ» (Հանքավան), իսկ ավելի համառոտ՝ «Մադեն» (Հանք)։

9. Բնագրի ٩٥٥-ը գերմաներեն թարգմանության մեջ ընթերցված է Bū\ūh և նույնացված արծաթի հանքից կամ Բուլգար մադենից դեպի արևմուտք գտնվող անանուն բերդի հետ։ Սակայն դա ամենայն հավանականությամբ Թելուխ կամ Թուխ բերդն է, որ թուրքերն անվանում են Դյուլուք քալե (Dölük kale)։ Բերդը նաև կոչվում է Անաշա քալե կամ Քոջա քալե և գտնվում է դեպի Ենիջե գնացող երկաթուղու եզրին։ Այսպիսով այս երկրորդ ճանապարհը հավանաբար գալիս էր Կոնիայից, անցնում էր Երեւիով, Լուվայով, Փողանթիով, Թելուխ բերդի մոտով և Տարսոնի վրայով գնում էր մինչև Միջերկրականի ափը։

10. Կարամանիայից դեպի Այաս ձգվող ճանապարհը հավանաբար անցել է Մութի, Սիլիֆ-կեի, Տարսոնի և Մսիսի վրայով։

11. Ասորիքից և Մալաթիայի կողմերից եկող Երկու ճանապարհներ կային, որոնցից մեկը անցնում էր Բաղրասի, իսկ մյուսը՝ Արսլան բողազը և Աղջա-դաղ գեղից կոչվող լեռնանցքներով։

12. Դժվար է որոշակի ասել, թե Կիլիկիայի ո՞ր թագավորի մասին է խոսքը, «թագավոր» (թաքֆուր) կոչումը օգտագործված է որպես հատուկ անուն։ Ըստ Ռուդոլֆ-Քոլինբերգի կազմած ժամանակագրության, 1289—1307 թթ. որոշ ընդմիջումներով իշխել է Լևոն II-ի որդի Հեթում II-ը, որը միաժամանակ ֆրանցիսկյան միաբանության անդամ էր և ուներ հոգևոր կոչում։ 1293—1295 թթ. և 1296—1299 թթ. նա գահը ղեջել է իր Թորոս, Սմբատ և Կոստանդին եղբայրներին, իսկ 1301-ին գահ է բարձրացրել Թորոսի որդի Լևոն III-ին, ինքը մնալով որպես խնամակալ (տե՛ս W. H. Rüdt-Collenberg, The Rupenides, Hethumides and Lusignans, Paris, 1963, էջ 22)։ Այս ժամանակամիջոցում Կիլիկիան բազմիցս ենթարկվել է մամլուքների արշավանքներին, 1295—1297 թթ. Հեթումն ու Սմբատը գնացել են Ղաղան-խանի մոտ և, դաշինք

կներելով, համատեղ հաղթական կռիվներ են մղել մամլուքների դեմ: Ամենայն հավանականությամբ Ռաշիդ-էդ-դինի տեղեկությունները «Հայոց թագֆուրի» մասին վերաբերում են Հեթում II-ին կամ Լևոն III-ին: Պետք է ենթադրել, որ Ֆրանսիայի թագավորի և Կիլիկիայի տիրակալների միջև տեղի ունեցած բանազնացությունների մասին իլխանական պետական մարմինները տեղեկացվել են անձնական շփումների և բանակցությունների ընթացքում:

13. Այստեղ նմանապես «Բեյ դը-Ֆրանս»-ը (Ֆրանսիո թագավոր) գործածված է որպես հատուկ անուն: Վստահորեն կարելի է ասել, որ խոսքը վերաբերում է Ֆիլիպ IV-ին (1285—1314):

14. Ինչպիսիք այս հատվածում «Սիս»-ը պետք է հասկանալ ամբողջ Կիլիկիայի իմաստով, ոչ միայն քաղաքի: Մահմեդական աղբյուրներում Կիլիկիան հաճախ անվանվում էր «Բիլադ-ալ-Սիս» (Սսի երկիր): Իսկ Ռուբինյան արքաներին կոչում էին «թագֆուր-ե Սիս» (Սսի թագավոր. տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 59, հմմտ. «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», I, Հրովարտականք, պրակ Ա, կադմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1956, էջ 45, 78—79):

15. Առաջին ձեռագրի «Կուդսի»-ն գրչական վրիպակ պետք է համարել: Ծիշտ է Հաֆեզ-ե Արրուի բնագրի «Ներբրեսի»-ն, որ նշանակում է «կիպրոսյան»: «Կուդսի» կարող էր կոչվել միայն Երուսաղեմին վերաբերող որևէ բան: Այդ քաղաքն է, որ արաբները անվանում են «Կուդս»:

16. Սպիտակ խոնկ—Cistus ladaniferus.

РАШИД-АД-ДИН О КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ

Доктор историч. наук А. Д. ПАПАЗЯН

(Резюме)

В 1977 г. в Вене был издан историко-географический труд Рашид-ад-дин Фазл-Аллаха «Тарих-ал-Афранч» («История франков») с факсимиле двух новонайденных рукописей и немецким переводом текста. Для арменоведения определенный интерес представляет 2-я глава II части этого труда, в которой Рашид-ад-дин сообщает ценные сведения о географическом положении Киликийского армянского государства, его населенных пунктах и жителях, дорогах и средствах связи, а также о его политическом положении и созданной для отражения мамлюков системе укрепленных городов-крепостей, на которую опиралась своеобразная тактика ведения войн.

С целью сделать эти сведения более доступными широким кругам специалистов, здесь публикуется уточненный персидский текст указанной главы, составленный на основе изданных К. Яном факсимиле двух рукописей, а также его перевод на армянский язык.